և ծաղկել, այս տեղիքս դիժար էր, և մագաղաթ չէր գըտվէր. վասն այն տեղիս տեղիս՝ պատուով գրեցի։ Վասն որոյ աղաչեմ զամենեսեան ներել սխալանաց մերոց, և խնդրել ապենիազ Արարչէն՝ տալ թողութիւն մեղաց մերոց. եւս առաւել խնդրել յԱստուծոյ վասն ծնողացս, հօրն իմոյ Նիկողոսին և մօրն իմոյ Շնոֆորին և քուերս Խուտրաթին, և եղբարց իմոց՝ որ հանգուցեալ են առ Քրիստոս։ Նա և զբազմաշխաս Սրապիոնն՝ որ գրեց յեսի չորս տետրն և կապեց զսուրբ աւետարանս՝ յիշեցէք ի Քրիստոս. Նա և զհոգեւոր և զմարմնաւոր վարդապետքն և ուսուցանողքն մեր, զոր ոչ գրեցաք զանուանս նոցա, զի մի յերկարեսցի բանս. այլ գրեսցի անուանք նոցա ի դպրութիւն կենաց։ Զմեզ յիշողացդ և յիշեցելոցս առ հասարակ պարգեւեսցէ Քրիստոս զիւր առատ ողորմութիւնն, աստ և ի հանդերձեալն։

(Յետոյ գրեալ.) Գերապայծառ և ամենապատիւ Տէր Նիկողայոս թորոսովիչն արքեպիսկոպոսն Լէոպոլսի և առաջնորդն, զայս սուրբ աւետարանս պարգեւեաց եկեղեցւոյս Ստանիսլաւովու, ի յիշատակ իւր յաւիտենական. զոր յետոյ բարեպաշտ Իլովցիք և Սդանիսլաւցիք ոսկւով և արծաթով զարդարեցին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

1625.

Գրեցաւ այս Գաւազանագիրքս ձեռամբ մեղաւոր և անարժան Ներսէս սարկաւագի, որդւոյ Հօլուպ վոյթին Կամենցւոյ, ի յաշխարհս Իլախաց, ի նոյն քաղաքի, ի վայելումն հոգեւոր հօրն մերոյ սրբասնեալ և քաջ ռաբ... [ՅԷչմիածին]։

1626.

Աստուծոյ օգնականութեամբն սկսայ և կատարեցայ Տօնացոյցս այս, Հայոց թվին ՌՀԴԻՆ, և ամսեանն օգոստոսի հինգերորդին, ի քաղաքն որ կոչի Կամենից, ձեռամբ մեղաւոր և անարժան Գաբրիել երէցին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։... Գրեցաւ Տօնացոյցս ի լաւ և յընտիր օրինակէ։..

1627.

Թվին ՌՀԵ, մայիսի ԺԹ, օրն շաբաթ, եկաք ի Զամոսցա, Պարոն Տէր Մարտիրոս Ս. Էջմիածինեցի, և Պր. Տէր Եղիա Երզնկացի, և Տէր Խաչատուր աբեղայ Իլովցի, վասն նուիրակութեան և հիմնարկութեան սուրբ եկեղեցւոյ, և ի հայրապետութեան Տեառն մերոյ Տէր Մելքիսեդ կաթողիկոսին, որ էր ինքն ի Լով քաղաք. և առաքեաց զմեզ ի Զամոսցա քաղաք. և ի քահանայութեան Տէր Յակոբ քահանային, եկաք հանգեաք ի տուն նորին. Աստուած փառաւորէ զինքն ի հոգի և ի մարմին. ամէն։ [Ճաշոց ի Վիեննայ։]